

խուժեան նշան՝ երեք օր շարունակ թմրկահարութիւն կատարուեցաւ Կահիրէի միջնաբերդին մէջ : Այս առիթով՝ Ըշրկթիմուր ամիրային պատուի հագուստ մը դրկուեցաւ : Անիկա՛ էր որ Սսի վրայ արշաւեց, պաշարեց եւ անոր մէջ երկու ամիս նեղեց քաղաքին տէրը (Հայոց) روضه -ը (= թագաւոր), որ անկէ ետքը դաշինքով անձնատուր ըլլալ ուզեց, վասն զի իրեն համար կարելի չէր դէմ դնել զօրքին : Ըշրկթիմուր ամիրան զգեակին տիրեց եւ Աստուծոյ մէ՛կ ըլլալը ցուցնող խօսքը քարոզել տուաւ քաղաքին մէջ : Հոն պահապան զօրք դրաւ : Թագաւորն ու պարօնները՝ նոյնպէս եւ անոր զօրքին մէկ մասը՝ դերի բոնեց, եւ Հալէբ դառնալէն ետքը Կահիրէ զրկեց ամէնն ալ : Սուլտանին կողմէն ամիր Յակուբ Շահ դրկուեցաւ Սիս, իրրեւ կառավարիչ : Աստուած այսպէս վերջ դրաւ խաչապաշտ Հայերու իշխանութեան : » (1)



## ԺԱ

### ԼԵՈՆԻ զԵՐՈՒՅԻՆՐ



Եսանք թէ Լեւոն 1375 թ. ապրիլի 16-ին անձնատուր եղաւ Ըշրկթիմուրին, որ եգիպտական զօրքով եկաւ գրաւեց Հայոց մայրաքաղաքը :

Արդ՝ շարաթ մը հանգստանալէ ետքը, ապրիլի 22-ին, ամիրան գերիներով միասին ճամբայ ելաւ գէպի Հալէբ : Մայիսի առաջին օրը կարաւանը հասնելով Հալէբ, կառավարիչը մարդ զրկեց Եգիպտոս, սուլտանէն հրահանգ խնդրելու համար : Սուլտանը, ինչպէս գիտենք Մակրիզիէն, Սսի կառավարիչ կարգելով Յակուբ Շահ ամիրան, իսկոյն ճամբայ հանեց. իսկ Ըշրկթիմուրին հրամայեց իր թանկագին գերիներովն շտապել Եգիպտոս :

Յունիսի առաջին օրն էր . գերիներու խումբը ճամբայ ելաւ Հալէբէն,

(1) Գաւազակագիրի քաղաւորներու հարստութեանց, արաբական ձեռագիր Bibl. Nat.-ի, քիւ 1727, քղ. 85 ա :